ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՀԽ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԺՆԵՎՈՒՄ

(7-9 մայիսի 2007 թ.)

Մայիսի 7-9-ը Ժնևում տեղի ունեցավ ԵՀԽ էկումենիկ պաշտոնյաների հինգերորդ հանդիպումը, որին մասնակցում էին մոտ 35 ներկայացուցիչներ ԵՀԽ անդամ Եկեղեցիներից:

Հայ Առաքելական Եկեղեցուց հանդիպմանը մասնակցում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը:

Հանդիպման նպատակն էր ընդհանուր եզրեր գտնել ԵՀԽ-ի և անդամ Եկեղեցիների միջև փոխհարաբերություններն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Մայիս 7-9-ը կայացած հանդիպման ընթացքում ԵՀԽ պաշտոնեության կողմից ներկայացվեցին ԵՀԽ գործունեությունը, ծրագրերը: Հանդիպում տեղի ունեցավ ԵՀԽ-ին կից նորաստեղծ երիտասարդական կառույցի անդամների հետ, ապա բանախոսությամբ հանդես եկավ ԵՀԽ գլխավոր քարտուղար Դոկտ. Սամուել Կոբիան, որը ներկայացրեց վերջին տարիներին իր ծավալած գործունեությունը և հատկապես տարբեր Եկեղեցիներ կատարած այցելությունները: Հարց ու պատասխանի ընթացքում գլխավոր քարտուղարը խոսեց հոգևոր առաջնորդների և պետերի հետ հանդիպումների կարևորության մասին:

Հանդիպման մասնակիցներն այցելեցին Բոսեի Էկումենիկ դպրոց: Էկումենիկ դպրոցի տնօրենը ներկայացրեց դպրոցի գործունեությունը, այստեղ կատարված փոփոխությունները և միջոցառումների շարքը: ԵՀԽ-ի «Բռնությունը հաղթահարելու տասնամյակ» ծրագրի պատասխանատուները ներկայացրեցին առաջիկայում իրենց կատարելիք աշխատանքները՝ կարևորելով հատկապես 2011 թ. կայանալիք Միջազգային Խաղաղասիրական Քրիստոնեական Բանակումը:

Այս ծրագրի շրջանակներում հանդես եկավ «Էկումենիկ ուխտագնացություն դեպի Պաղեստին» ծրագրի քարտուղարը և տեղեկություններ հաղորդեց այս տարի հունիսին Ամմանում կայանալիք Մերձավոր Արևելքի երկրների հոգևոր առաջնորդների միջկրոնական գագաթաժողովի մասին, որին Հայ Եկեղեցուց մասնակցելու է Արիս արքեպս. Շիրվանյանը՝ Երուսաղեմի հայոց Պատրիարքությունից: Մերձավոր Արևել-

քի հոգևոր առաջնորդների գագաթաժողովի օրակարգում է նաև Հայոց Ցեղասպանությունը ճանաչելու հարցը:

Հանդիպման ընթացքում Հոգեշնորհ Հայր Սուրբը ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծավալած միջեկեղեցական գործունեությունը և այն ծրագրերը, որոնք իրականացվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից: Մայր Աթոռի պատվիրակները, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, ակտիվ գործունեություն են ծավալում միջեկեղեցական և միջկրոնական հարաբերությունների բնագավառում: Նրանցից շատերը տարբեր հանձնախմբերի գործադիր վարչությունների անդամներ են:

Հունիսի 14-19-ը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի հրավերով Հայաստանում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախումբը կգումարի իր տարեկան նիստը՝ մշակութային երկխոսության թեմայով: Հանդիպմանը կմասնակցեն ավելի քան 35 ներկայացուցիչներ եվրոպական Եկեղեցիներից և բանախոսներ՝ Եվրախորհրդից:

2007 թ. սեպտեմբերի 25-28-ը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գործադիր վարչությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրավերով Հայաստանում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կանցկացնի իր տարեկան հանդիպումը, որին իրենց մասնակցությունը կբերեն ճանաչված աստվածաբաններ և եկեղեցական գործիչներ աշխարհի տարբեր երկրներից՝ ԵՀԽ ղեկավար մարմնի հետ միասին:

ԵՀԽ-ն ղեկավարող բարձրագույն այս մարմնում Հայ Եկեղեցու ներկայացուցիչն է Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպս. Այքազյանը: Իսկ սեպտեմբերի 5-9-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատվիրակությունը, թվով 21 հոգի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանի գլխավորությամբ կմասնակցի Համաեվրոպական Երրորդ Էկումենիկ Համագումարին: Համաեվրոպական նախորդ համագումարը տեղի է ունեցել 1997 թ. Գրացում (Ավստրիա), որին իր մասնակցությունն է բերել և բացման խոսքով հանդես եկել Գարեգին Ա երջանկահիշատակ Կաթողիկոսը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ